ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 Նոյեմբերի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

162
(3012)

100 դրամ

Q. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Ո՞Վ Է ԴԻՄԵԼ ՔՅԱՐԱՄՅԱՆԻՆ՝ ԱՂԱԶԱՐՅԱՆԻ ՈՐԴՈՒ ՔՐԳՈՐԾՈՎ



ՔՊ-ական Հովիկ Աղազարյանի շուրջ օղակը սեղմվում է. նա, բացի կաշառք պահանջելու վարույթից, նաեւ այլ գործով, ենթադրաբար, միջամտել է արդարադատությանը, որը քրեորեն պատժելի արարք է: «Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ երկուշաբթի՝ առավոտյան, հակակոռուպցիոն կոմիտեում հարուցված քրեական գործի շրջանակում առերես հարցաքննվել է Հովիկ Աղազարյանը, եւ այդ ընթացքում երկու քաղաքացիները պնդել են, որ Աղազարյանը իրենցից կաշառք է պահանջել մանր եղջերավոր կենդանիների արտահանումը անխոչընդոտ կազմակերպելու համար:

Իսկ նրա որդին, օգտվելով օրենքի բացից (որը օրենսդիր հայրը չի նախաձեռնել կարգավորել), մեծաքանակ ավտոմեքենաներ է ներկրել ՀՀ, արտահանել, ապա պետությունից ստացել է ԱԱՀ-ի վերադարձ: ՀՀ քննչական կոմիտեի արդեն նախկին ղեկավար Արգիշտի Քյարամյանը ԱԺ-ում հայտարարեց, որ դա անօրինականություն է, դրա համար էլ Աղազարյանի որդու ավտոմեքենաները գտնվում են արգելանքի տակ:

Անցել է մեկ ամիս, եւ «Ժողովուրդ» օրաթերթը հետեւողականորեն փորձում է պարզել, թե ով է դիմել Քյարամյանին՝ Աղազարյանի որդու մեքենաների գործով: ՔՊ-ականները հրաժարվում էին հայտնել կամ խոստովանել, թե ով է միջամտել քրգործի ընթացքին: Այսպիսով՝ «Ժողովուրդ» օրաթերթի խիստ իրազեկ աղբյուրները հայտնում են՝ երկու անգամ դիմում է ուղղվել ՀՀ քննչական կոմիտե, եւ երկու անգամ էլ դիմողը եղել է հենց ինքը՝ Հովիկ Աղազարյանը: Առաջին անգամ դիմել է անձամբ գործը վարող քննիչին, երկրորդ անգամ՝ ՔԿ նախագահի տեղակալ Արսեն Այվազյանին: Պատգամավոր Աղազարյանը, օգտագործելով իր պատգամավորական լծակները, դիմել է քննիչին, ապա Քյարամյանի տեղակալին եւ համոզել նրանց, որ իր որդու արգելանքի տակ գտնվող մեքենաները հանեն կալանքից:

Մեր իրազեկ աղբյուրների փոխանցմամբ՝ գործը քննող քննիչը Աղազարյանի դիմումը փոխանցել է իր վերադասին, վերադասը հայտնել է Արգիշտի Քյարամյանին, իսկ Քյարամյանն էլ մերժել է: Երկրոդ անգամ Աղազարյանը դիմել է ՔԿ նախագահի տեղակալ Արսեն Այվազյանին. Այվազյանը դիմումի մասին տեղյակ է պահել Արգիշտի Քյարամյանին ու ստացել մերժում:

Այս իրավիճակում ՔՊ-ական պատգամավորի արարքի ենթադրյալ քրեական ծանրությունը չի պակասում: Նա, ենթադրաբար, խախտել է նախ «Պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կետերը սահմանում են. «Պատգամավորի լիազորություններն իրականացնելիս չառաջնորդվել իր կամ իր հետ փոխկապակցված անձանց անձնական շահերով, չօգտագործել պատգամավորի պաշտոնի հեղինակությունը՝ ի շահ իրեն կամ այլ անձի»: Բացի այդ, քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածի 1-ին մասի երկու դրվագով սահմանված է արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելու եւ խոչընդոտելու արգելքը: Իսկ Աղազարյանն իր դիմումով ենթադրաբար փորձել է խոչընդոտել եւ ազդեցություն ունենալ նախաքննության վրա: Այսպիսով՝ Հովիկ Աղազարյանը, բացի կաշառքի վարույթից, որն արդեն նախաձեռնված է, նաեւ երկու այլ ենթադրյալ օրինախախտումներ է թույլ տվել, ինչի համար ՀՀ գլխավոր դատախազը պետք է մտնի ԱԺ եւ Աղազարյանին պատգամավորական անձեռնմխելիությունից զրկի պառլամենտի միջոցով՝ հարուցելով մեղադրանքներ նրա նկատմամբ: Իսկ եթե մինչ այդ նա մանդատը վայր դնի, թերեւս այս քրեական ենթադրյալ հանցանքները կներվեն, կմոռացվեն:

Իրավապահ բլոկի մասնակցությամբ մեկ ամիս առաջ կայացած խորհրդարանական լսումները ճակատագրական դարձան ուժային պաշտոնյաների եւ կոնկրետ պատգամավոր Նարեկ Ջեյնալյանի համար. Հովիկ Աղազարյանը դեռ դիմադրում է: Կհարցնեք՝ ի՞նչ կապ ուներ Անդրանիկ Քոչարյանի բեմադրած պառլամենտական քննարկումը, «ուժայիններին գլխատելու» պրոցեսի հետ. բացատրենք: Ճակատագրական նոյեմբերի 17-ի գիշերը՝ կիրակի, երբ Նիկոլ Փաշինյանը հարսանիքից հետո հրահանգել էր իր աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանին տեղեկացնել 6 պաշտոնյաներին, որ պետք է առավոտյան ազատման դիմումներ գրեն, իշխանական, իսկ ավելի կոնկրետ՝ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանին փոխկապակցված Radar Armenia-ն հայտնեց, որ ԱԺ պատգամավորական մանդատները վայր կդնեն Հովիկ Աղազարյանը եւ Նարեկ Ջեյնալյանը: Այսինքն՝ կուսակցությունում արդեն գիտեին, որ ուժայիններին պատժելուն զուգահեռ նաեւ խորհրդարանականները պետք է պատժվեն: Իսկ ինչ էր արել Նարեկ Ջեյնալյանը. նա ամբիոնից կշտամբել էր Արգիշտի Քյարամյանին թե՝ Ձեր աշխատասենյակում չեք, որ նման ժեստիկուլյացիայով եք խոսում պատգամավորների հետ: Բացի այդ, նա խոսափողից հեռու, բայց օգտագործել էր նաեւ «սեւ շորերով պատգամավորի», իսկ իրականում ՔՊ պատգամավոր Արփի Դավոյանի օգնականի բառապաշարը՝ «կուռաժիտ լինելու» մասին, ինչը չներվեց Ջեյնալյանին: ՔՊ-ն համարում է, որ Ջեյնալյանը խախտել է պատգամավորի վարքականոնի մասին ՀՀ օրենքը եւ Նիկոլ Փաշինյանը որոշել է, որ նա պետք է հեռանա: Նարեկ Ջեյնալյանը, իհարկե, չի դիմադրել եւ անմիջապես ենթարկվել է Փաշինյանի պահանջին՝ ներկայացնելով մանդատից հրաժարվելու դիմում. բայց եւ նեղ շրջապատում դժգոհել է, թե ՔՊ պատգամավորներ կան՝ այնպիսի արարքներ են թույլ տվել ու անպատիժ մնացել, որ տարակուսելի է, թե ինչու հենց ինքը պետք է պատիժ կրեր:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:



Հշխող խմբակցության ներսում ներթիմային գզվռտոցները շարունակվում են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ խմբակցության պատգամավորներ Անդրանիկ Քոչարյանը եւ Սիսակ Գաբրիելյանը վերջերս խմբակցության փակ նիստերից մեկի ժամանակ թեժ վիճաբանություն են ունեցել, որի ժամանակ էլ կանանց ներկայությամբ հայհոյախառն արտահայտություններ են հնչեցրել միմյանց հասցեին. նիստին ներկա ՔՊ-ականները մի կերպ են սաստել նրանց, որպեսզի մեծ վիճաբանություն չլինի: Անդրանիկ Քոչարյանն ու Սիսակ Գաբրիելյանն էլ, պատժից խուսափելու, միջադեպը կոծկելու համար, որ հարցը հանկարծ չհասնի ՔՊ վարչություն եւ Փաշինյանն իրենց էլ «չարժանացնի» Հովիկ Աղազարյանի ու Նարեկ Ջեյնալյանի ճակատագրին, ԱԺ-ից դուրս խոսել են իրար հետ, փորձել խնդիրները հարթել: Բայց խմբակցության կանայք բարկացած են, քանի որ հայհոյախառն արտահայտությունները իրենց ներկայությամբ են հնչել: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ պատգամավորներից ստացած տեղեկությունը ճշտելու համար փորձեց կապ հաստատել Սիսակ Գաբրիելյանի հետ, սակայն նա մեր զանգին չպատասխանեց, Քոչարյանը՝ եւս: Ինչպես ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, Անդրանիկ Քոչարյանի եւ Սիսակ Գաբրիելյանի հարաբերությունները լարվել են այն բանից հետո, երբ Քոչարյանը թիմակիցների հետ առանձնազրույցների ժամանակ տհաճ ռեպլիկներ է թողել Սիսակ Գաբրիելյանի եւ Հրաչյա Հակոբյանի հասցեին ու պիտակավորել վերջիններիս: Մասնավորապես, Անդրանիկ Քոչարյանը վատաբանել է՝ նրանց կապելով խաղադրույքներով եւ թմրաբիզնեսով հարստացող գործարարների հետ՝ ասելով գործարարի «դեղ ցրողներ»: Հենց այս խոսակցություններն են պատճառ եղել, որ եւ Հրաչյա Հակոբյանը եւ Սիսակ Գաբրիելյանը կուսակցության վերնախավի մոտ բարձրացրել են երկու հարց. կամ Քոչարյանը պետք է ապացուցի, կամ պատասխան տա սուտ խոսելու համար:

Հերթական անտուն ՔՊ-ականը, ով Երեւանի ավագանու անդամից դարձավ պատգամավոր, անմիջապես տուն է ձեռք բերել: Այսպիսով՝ նորանոր նվաճումներ է արձանագրում «Թավշյա հեղափոխությունը». ցավոք՝ միայն հեղափոխականների համար: ՔՊ-ական պատգամավոր Գայանե Եղիազարյանը լրացրել է Երեւանի ավագանիում պաշտոնը ստանձնելու հայտարարագիր, ըստ որի՝ ուներ ընդամենը կանխիկ 500 հազար դրամ, ուրիշ՝ ոչինչ: Մի քանի ամիս անց, արդեն որպես ԱԺ պատգամավոր Եղիազարյանը ձեռք է բերել Երեւանում բնակարան 1/4 համամասնությամբ, 36 միլիոն դրամ արժեքով՝ ենթադրենք 9 միլիոն դրամ մեկ անձի հաշվով: Ուշագրավը այն է, որ բնակարանի գործարքի մյուս կողմը՝ ըստ էության վաճառողը, Երեւանի քաղաքապետարանն է: Այսինքն՝ պատգամավորը քաղաքապետարանից բնակարան է ձեռք բերել շուկայականից էժան գնով: Երբվանից է քաղաքապետարանը բնակարաններ վաճառում ՔՊ-ականներին՝ հայտնի չէ, բայց հակակոռուպցիոն կոմիտեն պետք է որ այս հարցը ճշտի ու հետեւություններ անի:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԻՇԽՈՂ ԹԻՄԻ ՆԵՐՍՈՒՄ

Նիկոլ Փաշինյանը հեղափոխական մուրճով մտել է պետական կառույցներ եւ պաշտոնանկություններ սկսել:

Նոյեմբերի 17-ին հրապարակվել էր պաշտոնյաների ցանկ, որոնց Նիկոլ Փաշինյանը անակնկալ կերպով տեղեկացրել էր՝ դիմում գրեն եւ հեռանան:

Նիկոլ Փաշինյանի թիրախում հայտնված պաշտոնյաներն են ՆԳ նախարար Վահե Ղազարյանը, ՔԿ ղեկավար Արգիշտի Քյարամյանը, ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանը, ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը, հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար Սասուն Խաչատրյանը:

Հայտնի դարձավ նաեւ, որ երեքշաբթի օրը մանդատը վայր դնելու մասին հայտարարել է նաեւ Նարեկ Ջեյնալյանը: Մանդատը վայր դնելու պահանջ է դրվել նաեւ Հովիկ Աղազարյանի առջեւ, սակայն նա դեռ համառում է:

«Ժողովուրդ» օրաթերթը թեմայի վերաբերյալ զրուցել է ՔՊ-ական պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի հետ:

-Պարոն Գաբրիելյան, գործադիրում տեղի ունեցող պաշտոնանկությունների այս շքերթը կարծես հիմա էլ խորհրդարան է տեղափոխվել. մանդատը վայր դրեց Նարեկ Ջեյնալյանը: Երեքշաբթի օրը՝ վարչության նիստին, ներկա էր նաեւ Հովիկ Աղազարյանը, եւ խոսակցություններ կան, որ նրան եւս պարտադրվել է, որ հրաժարականի դիմում ներկայացնի, վայր դնի մանդատը: Ի՞նչ է կատարվում ֆրակցիայում:

-Հրաժարականի դիմում ներկայացնելու պարտադրանք չի եղել որեւէ մեկի նկատմամբ, իսկ թե ինչու են պատգամավորները որոշել իրենց մանդատները վայր դնել, կարծում եմ, դեռ մեկ շաբաթ ժամանակ կա, հնարավորություն կունենաք իրենցից անձամբ հարցնելու, ես չեմ կարող ասել:

-Պարոն Գաբրիելյան, ասում եք, թե պարտադրանք չկա, բայց, ըստ էության, եթե հարցը հասնում է վարչության նիստ, պատգամավորին կանչում են այնտեղ, ուրեմն խնդիրը լուրջ է:

Տեսանք, որ Նարեկ Ջեյնալյանը հայտարարեց, թե հրաժարական է տալիս, բայց Հովիկ Աղազարյանը մինչ այժմ դեռ համառում է:

-Նորմալ գործընթաց է, որ պատգամավորին կարող են վարչություն կանչել, սա հրաժարական պարտադրել չի նշանակում ու դրա հետ կապ չունի: Ինձ նույնպես կանչել են տարբեր հարցերի վերաբերյալ: Այդտեղ որեւէ արտառոց բան չկա, մեր դիմումների հիման վրա կուսակցությունը քննարկում է այս կամ այն կարեւոր հարցը: Պարզապես մեր կողմից նաեւ լրատվամիջոցներին էր հայտարարվել, որ կուսակցության վարչությունում որոշ կարգապահական վարույթներ կան, գուցե դա է եղել այսքան աղմուկի, այս քննարկումների պատճառը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՄԻ ՇԱՐՔ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆՔ ԿՄԵԿՆԵՆ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը նոյեմբերի 23-ից 30-ը ներառյալ գործուղվելու է Ամերիկայի Միացյալ Նահանգների Լոս Անջելես քաղաք:

Լոս Անջելեսի քաղաքապետ Քերընն Բասսի հետ հանդիպման նպատակն է երկկողմ համագործակցության հարցերի քննարկումը:

ԱՄՆ Լոս Անջելես քաղաք պատվիրակությունը մեկնելու է հետեւյալ կազմով՝

Տիգրան Ավինյան՝ Երեւանի քաղաքապետ,

Լուսինե Դայան՝ Երեւանի քաղաքապետի խորհրդական,

Պետրոս Պետոյան՝Կենտրոն վարչական շրջանի ղեկավար,

Դավիթ Գեւորգյան՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ,

Անդրանիկ Թեւոսյան՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության եւ բարեկարգման վարչության պետի ժ/պ,

Սարգիս Մանուկյան՝ «Երեւան քաղաքի կառավարման տեխնոլոգիաներ» ՓԲԸ-ի տնօրեն,

Օֆելյա Սիմոնյան՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության պետի տեղակալ,

Լուսինե Ղարիբյան՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի պետի ժ/պ,

Մալվինա Պողոսյան՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության սոցիալական մեդիա համակարգող,

Արամ Դեւրիկյան՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության օպերատոր:

Գործուղման ծախսերը հոգում է ՀՀ կառավարությունը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԱՆԴԱՏԸ ՎԱՅՐ ԴՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Հովիկ Աղազարյանը դեռ համառում է: Չնայած, որ նեկ օր առաջ ՔՊ վարչության ժամանակ նրան պարտադրվել է վայր դնել մանդատը, բայց ԱԺ-ից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Հովիկ Աղազարյանը դեռ մանդատը վայր դնելու դիմում չի ներկայացրել:

Հիշեցնենք, որ երեքշաբթի օրը մանդատը վայր դնելու մասին հայտնեց Նարեկ Ջեյնալյանը:

Ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր. «Լրատվականի իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ Վիետնամում գտնվող Ալեն Սիմոնյանը այսօր կեսօրին զանգահարել է ՔՊ-ական պատգամավորներ Հովիկ Աղազարյանին եւ Նարեկ Ջեյնալյանին ու փոխանցել Նիկոլ Փաշինյանի պահանջ-խնդրանքը:

Համենայնեպս, ՔՊ պատգամավորները ArmLur.am-ին այսպես պատմեցին. Ալեն Սիմոնյանն ասել է, որ պետք է Ջեյնալյանն ու Աղազարյանը պատգամավորական մանդատները վայր դնեն:

Նարեկ Ջեյնալյանն անմիջապես համաձայնել է ու գրել մանդատից հրաժարվելու դիմումը՝ իբրեւ սեփական նախաձեռնություն: Իսկ Աղազարյանն ասել է, որ չի պատրաստվում վայր դնել իր մանդատը՝ հավելելով՝ ինչ ուզում են՝ անեն:

Նոյեմբերի 17-23-ը արձակուրդում գտնվող Ալեն Սիմոնյանի խոսնակ Մովսես Հարությունյանը ArmLur.am-ի հետ զրույցում հերքեց հեռախոսազանգի ու նման զրույցի մասին լուրը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Աղազարյանը երեկ՝ երեկոյան կանչվել է ՔՊ բարձրագույն մարմին՝ վարչության նիստին: Այնտեղ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ բացատրել են Աղազարյանին, որ պետք է պատգամավորական մանդատից ինքնակամ հրաժարվի:

ArmLur.am-ի բացառիկ տեղեկություններով՝ նա եւս մանդատից հրաժարվելու դիմումը գրել է:

Հավելենք, որ ԱԺ Կանոնակարգ օրենքի համաձայն՝ դեռ 5 օր ժամանակ ունի Հովիկ Աղազարյանը եւ կարող է փոշմանել ու հետ վերցնել մանդատից հրաժարվելու իր դիմումը՝ պահպանելով մանդատը:

Պատճառը ԱԺ հայտնի լսումների օրը նրա ցուցաբերած վարքագիծն է, երբ ԱԺ ամբիոնից իր որդու քրգործի հարցերն էր լուծում՝ վիճելով քննչական կոմիտեի ղեկավար Արգիշտի Քյարամյանի հետ:

Նարեկ Ջեյնալյանն էլ նույն պատճառով գնաց. նա էլ վատ տոնայնությամբ հակադարձեց Քյարամյանին թե՝ «Ձեր աշխատասենյակում չեք, ի՞նչ ձեւով եք խոսում»:

Այսպիսով, թեեւ Քյարամյանին աշխատանքից ազատեց Փաշինյանը, բայց փորձում է նաեւ արդարության զգացում ապահովել նրա համար:

Հերթը Անդրանիկ Քոչարյանինն է:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ «ԽՈՉԸՆԴՈՏԸ» ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ Է

Խաղաղության համաձայնագրի ստորագրման համար Ադրբեջանը եւ Հայաստանը նախ եւ առաջ պետք է ավարտին հասցնեն դրա տեքստի վրա աշխատանքը: Նման հայտարարություն է արել Ադրբեջանի նախագահի հատուկ հանձնարարությունների գծով ներկայացուցիչ Էլչին Ամիրբեկովը:

«Դրական ենք գնահատում տեքստում դեռեւս բաց մնացած որոշ հարցերի շուրջ համաձայնության գալու հեռանկարները», - նշել է նա:

Բաքվից կրկին հայտարարել են, թե խաղաղության գործընթացի հաջող ավարտի գլխավոր խոչընդոտը, «Ադրբեջանի նկատմամբ շարունակվող տարածքային հավակնություններն են»՝ կրկին հիշատակելով ՀՀ սահմանադրությունը:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՔԱՆԴՈՒՄ Է ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ

Ադրբեջանը տեւական ժամանակ է քանդում է Ստեփանակերտի թաղամասերը, պատմամշակութային կոթողներն ու սրբավայրերը:

Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը:

«Այն երկրներն ու միջազգային կառույցները, որոնք հայտարարում են արցախցիների խաթարված իրավունքների վերականգնման, այդ թվում՝ Արցախ վերադարձի անհրաժեշտության մասին, խնդրին սրտացավ ու անկեղծ մոտենալու դեպքում խիստ ուշադրության կենտրոնում կպահեին Ստեփանակերտն ավերելու խնդիրը:

Տեւական ժամանակ է, ինչ Ադրբեջանը քանդում է Ստեփանակերտի թաղամասերը, ոչնչացնում, անարգում ոչ միայն Արցախի պատմամշակութային կոթողներն ու սրբավայրերը, այլ մարդկանց ունեցվածքը:

Միջազգային կառույցները, որպես կանոն, արձագանքում են Արցախի հոգեւոր արժեքների ոչնչացմանը, բայց այդ հայտարարությունները որեւէ լուրջ հետեւանք չեն ունենում:

Եթե աշխարհաքաղաքական դերակատարների մոտեցումներում Արցախի հարցը զուտ շահարկումների եւ Ադրբեջանի վրա ազդելու ճնշման միջոց չէ, ապա դրա հետ կապված արձագանքը պետք է լինի կոշտ եւ զսպող»,- գրել է Աբրահամյանը:

ՆԳՆ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐԸ

ՀՀ նախագահի հրամանագրով՝ Արփինե Սարգսյանը նշանակվել է ներքին գործերի նախարար:

«Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ համաձայն Սահմանադրության 131-րդ հոդվածի, ինչպես նաեւ «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի. Արփինե ՍԱՐԳՍՅԱՆԻՆ նշանակել ներքին գործերի նախարար»,- ասված է հրամանագրում:

Հիշեցնենք, որ երեկ Վահագն Խաչատուրյանը ստորագրել է Վահե Ղազարյանին ՆԳ նախարարի, Գնել Սանոսյանին՝ ՏԿԵ նախարարի պաշտոնից ազատելու հրամանագրերը:

ԻՐԱՎԻՃԱԿ

9,5 ՄԼՆ ԴՈԼԱՐ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ՝ ԱԹՍ-ՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մեծ Բրիտանիայի կառավարությունը մտադիր է մոտ 9,5 մլն դոլար հատկացնել Ուկրաինայի համար հարձակողական եւ հետախուզական անօդաչու թռչող սարքեր գնելու համար, հաղորդում է Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարությունը:

«Կառավարությունը հայտարարում է 7,5 միլիոն ֆունտ ստեռլինգի (9,5 միլիոն դոլար) լրացուցիչ ռազմական աջակցության մասին՝նոր հարվածային եւ հետախուզական անօդաչու թռչող սարքերի ձեռքբերման համար»,-ասվում է հայտարարության մեջ

Անօդաչու թռչող սարքերը Ուկրաինա կտեղափոխվեն Մեծ Բրիտանիայի եւ Լատվիայի գլխավորած երկրների կոալիցիայի միջոցով, որոնք համատեղ անօդաչու սարքեր են գնում Կիեւի համար:

ԳԱԶԱՅՈՒՄ ԱՎԵԼԻ ՔԱՆ 17 ՀԱԶԱՐ ԵՐԵԽԱ Է ՄԱՀԱՑԵԼ

Առնվազն 17,492 երեխա է մահացել 2023 թվականի հոկտեմբերից Գազայի հատվածում շարունակվող ռազմական գործողությունների պատճառով: Այս մասին անկլավի իշխանությունների մամուլի ծառայությունը հայտնել է իրենց Telegram ալիքում:

Ջեկույցի համաձայն՝ մահացածների թվում կա 211 նորածին եւ մինչեւ 1 տարեկան 825 երեխա: Առնվազն 35,060 անչափահասներ կորցրել են ծնողներից մեկին կամ երկուսին, իսկ մոտ 3,500-ը տառապում է խրոնիկական թերսնումից:

Գազայի իշխանությունների մամուլի ծառայության տվյալներով՝ իսրայելական հարվածների են ենթարկվել տեղահանվածների 204 ժամանակավոր կացարաններ: Ռմբակոծության հետեւանքով շուրջ 130 ուսումնական հաստատություն ամբողջությամբ ավերվել է, իսկ ավելի քան 340-ը զգալիորեն տուժել է գնդակոծությունից: Շուրջ 785 հազար աշակերտ զրկվել է դասերին մասնակցելու եւ կրթությունը շարունակելու հնարավորությունից:

ԲԺԱՆԻԱՆ ՀԵՌԱՑՎԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԻՑ

Աբխազիայի խորհրդարանն ընդունել է նախագահ Ասլան Բժանիայի հրաժարականը: Քվեարկությանը մասնակցել է 31 պատգամավոր, անվավեր է ճանաչվել 2 քվեաթերթիկ: 28 պատգամավոր կողմ է քվեարկել Ասլան Բժանիայի հրաժարականին, 1-ը՝դեմ:

Որոշման ընդունման համար անհրաժեշտ էր սահմանադրական մեծամասնություն՝24 ձայն:

Ըստ իշխանության եւ ընդդիմության ներկայացուցիչների միջեւ ձեռք բերված համաձայնության՝ նախագահի պարտականությունները կկատարի փոխնախագահ Բադրա Գունբան: Վարչապետի պաշտոնում կնշանակվի Վալերի Բգանբան՝ խորհրդարանի նախկին խոսնակը:

ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵՂԾԻՔՆԵՐԸ ՉԵՆ ԴԱԴԱՐՈՒՄ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՅՈՒՐԱՑՆՈՒՄ Է ՆՈՅԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Աստվածաշնչում հիշատակված համաշխարհային ջրհեղեղի հետ է կապվում Նախիջեւան անունը, իսկ Նախիջեւան քաղաքը համարվում է Նոյ նահապետի կողմից հիմնադրված հնագույն բնակավայրերից մեկը Հայաստանում: Ըստ ավանդության՝ Նոյը, Աստծու կամքով փրկվելով ջրհեղեղից, Արարատ լեռան գագաթից իջել է մերձակա հարթավայրը եւ իջեւանել մի վայրում, որը հետագայում կոչվել է Նախիջեւան («նախնական իջեւան»): Բազմաթիվ պատմություններ կան այն մասին, որ Նոյ նահապետը թաղվել է հենց Նախիջեւանում: 13-րդ դարի հայ պատմիչ Վարդան Արեւելցին գրում է. «Ի Նախչուան է տապանն մեծ նահապետին Նոյի եւ Նեմզարայ ի Մարանդ»:

Համարվում է, որ Նոյի դամբարանը գտնվել է Նախիջեւան քաղաքի հարավային կողմում՝ հայկական հին գերեզմանատանը: Դամբարան-մատուռը երկհարկանի է եղել: Նախիջեւանի քաղաքային ուսումնարանի տեսուչ, մանկավարժ Կ. Ա. Նիկիտինը նշել է, որ Նոյի գերեզմանը գտնվել է քաղաքի հարավային կողմում՝ հին բերդի մնացորդների մոտ: Իր ներկայիս տեսքով այն վերականգնվել է պարսիկների կողմից: Այստեղ նախկինում եղել է եկեղեցի, որը հետագայում ավերվել է, սակայն մատուռը նախկին եկեղեցու մնացորդն է: Մատուռի ներքին տեսքը նման է քարայրի՝ մեջտեղում կամարներով հենված քարե սյունով: Ըստ հայկական լեգենդի՝ այստեղ են գտնվում Նոյ նահապետի մասունքները: Ռուս հայտնի գրող եւ ճանապարհորդ Եվգենի Մարկովը նշում է, որ Նախիջեւանում է գտնվում այն վայրը, որտեղ, ըստ հայերի հավատալիքների, տապանից դուրս գալուց հետո հաստատվել, ապա մահացել է Նոյ նահապետը, իսկ «Նախիջեւան» բառը հին հայերենում բառացիորեն նշանակել է «առաջին բնակավայր»: Նոյի գերեզմանի մասին է հիշատակում նաեւ պատմաբան եւ ազգագրագետ Իվան Շոպենը:

1852 թվականին հրատարակված «Կովկասյան օրացույցում» նշվում է, որ հայկական շատ հուշարձաններ մուսուլմանների կողմից ենթարկվել են ավերածությունների: Կանգուն է մնացել Նոյի դամբարանը, որը համարվում է հայկական քրիստոնեական կառույց:

1930-ական թվականներին Նախիջեւանի ադրբեջանական իշխանությունները ավերել են մատուռը: Սակայն 2006 թվականին ադրբեջանցիները «վերհիշել» են այդ հուշարձանի մասին՝ վերականգնելով այն մուսուլմանական հուշարձաններին հատուկ ոճով:

Հարկ է նշել, որ Նոյի դամբարանը Նախիջեւանում եղած հայկական մյուս կոթողների նման հիմնահատակ չի ավերվել միայն այն պատճառով, որ մուսուլմանները Նոյ նահապետին եւս համարել են մեծ մարգարե: Հավելենք, որ ներկայումս ադրբեջանական քարոզչամեքենան փորձում է ապացուցել, որ դամբարանը մուսուլմանական մշակութային կոթող է՝ ժխտելով ակնհայտ փաստերն ու վկայություններն այն մասին, որ այն եղել է հայկական սրբատեղի, ուխտատեղի ու դարեր շարունակ կանգուն է մնացել հենց հայերի շնորհիվ:

«Գեղարդ» հիմնադրամ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՈՎԻԿ ԱՂԱԶԱՐՅԱՆԸ՝ ՄԱՆԴԱՏԸ ՎԱՅՐ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երեկ մասնակցել եմ կուսակցության նիստին, վարչությունն ինձ հրավիրել էր պարզաբանումներ տալու՝ լսումների հետ կապված բոլորին հայտնի միջադեպի կապակցությամբ», - այս մասին խորհրդարանում լրագրողների հետ զրույցում ասել է ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանը:

Աղազարյանը նշել է, որ իր օրակարգում մանդատ վայր դնելու հարց չկա:

Դիտարկմանը՝ եթե Նարեկ Ջեյնալյանը մանդատը վայր դրեց, իրենից էլ դա կպահանջեն, նա պատասխանեց. «Դա ենթադրություն է, իհարկե, բայց դե պարտադիր չէ: Երբ որ ներկայացվի նման պահանջ, այդ ժամանակ կմտածենք: Հնարավոր է, որ դնեմ: Եթե, օրինակ, պարոն Քյարամյանը, ինչպես ես հայտարարել եմ, հրապարակավ անուններ տա եւ հիմնավորի, որ այդ մարդիկ իմ անունից դիմել են իրեն խնդրանքով, իմ որդու մասնակցությամբ, նրա ընկերության հետ կապված քրեական վարույթի շրջանակում, ապա ես կդնեմ իմ մանդատը, ես դա հայտարարել եմ: Իսկ եթե չհրապարակի, ուրեմն առիթ չկա»,- ասել է նա:

Աղազարյանը նաեւ նշեց, որ վարչությունը չի կարող ասել՝ մանդատդ վայր դիր. այդպիսի լիազորություն չունի:

«Վարչությունը այդպիսի բան ասելու լիազորություն չունի թե՝ պարոն Աղազարյան, Ձեր մանդատը վայր դրե՛ք: Կարող է հորդորել՝պարոն Աղազարյան, հորդորում ենք, որ Ձեր մանդատը վայր դնեք: Նման հորդոր, եթե լինի, այդ ժամանակ կպատասխանեմ, վստահաբար չեմ կարող ասել՝ կլինի, թե ոչ», - ասել է պատգամավորը:

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԸ՝ ՏԿԵ ՆԱԽԱՐԱՐ

Դավիթ Խուդաթյանը, որ ներկայումս Արմավիրի մարզպետն է, կնշանակվի Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար: Այս մասին հայտնում է Նիկոլ Փաշինյանը:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Շրջակա միջավայրի փոխնախարարը չի իմացել, թե ինչու են իրեն ազատում պաշտոնից: Վերջինիս գիշերը ասել են, որ ազատման դիմում գրի, իսկ թե ինչի համար, ինքն էլ չի իմացել:

Նոյեմբերի 19-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Արա Մկրտչյանն ազատվել է շրջակա միջավայրի փոխնախարարի պաշտոնից:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով՝ Արա Մկրտչյանին ազատել շրջակա միջավայրի նախարարի տեղակալի պաշտոնից»,- նշված է տեքստում:

Նա այս պաշտոնին նշանակվել էր 2024թ. հունիսին: Ավելի վաղ Մկրտչյանն արդարադատության նախարարի տեղակալն էր:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՋԵՅՆԱԼՅԱՆԸ՝ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի հրամանով՝ Ներսես Ջեյնալյանը նշանակվել է նախարարի խորհրդական: Այս մասին հայտնում են ՀՀ արդարադատության նախարարությունից:

«Ներսես Ջեյնալյանն իր աշխատանքային փորձառությունն սկսել է արդարադատության նախարարությունում, որից հետո աշխատանքը շարունակել է պետական եկամուտների կոմիտեում:

Զբաղվում է նաեւ գիտական գործունեությամբ, այժմ դասախոսում է Հայաստանում ֆրանսիական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում»,- նշված է հաղորդագրության մեջ:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻ ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՎԱՐՈՒՅԹԸ

ԽՈՇՈՐ ՉԱՓԵՐԻ ԿԱՇԱՌՔ Է ՍՏԱՑԵԼ

Ռազմիկ Սարգսի Թադեւոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, զբաղեցնելով ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդականի պաշտոնը եւ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի ուժով հանդիսանալով պաշտոնատար անձ՝ իր ծառայողական լիազորությունները, դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով Մանուկ Քեշիշյանի եւ վերջինիս մոր՝ անհաս ձեռնարկատեր Տիգրանուհի Մովսիսյանի օգտին գործողություն կատարելու եւ հովանավորչության համար, մեկ դեպքով ստացել է խոշոր չափերի կաշառք, մեկ դեպքով՝ մանր չափերի կաշառք:

Արգիշտի Արամի Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա երկու դեպքով օժանդակել է պաշտոնատար անձ հանդիսացող՝ ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդականին՝ վերջինիս կողմից ծառայողական լիազորությունները, դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով Մանուկ Քեշիշյանի եւ վերջինիս մատնանշած անձի օգտին գործողություն կատարելու եւ հովանավորչության համար կաշառք ստանալուն /որից մեկ դեպքով՝ խոշոր չափերի, մեկ դեպքով՝ մանր չափերի/, ինչպես նաեւ կաշառք գումարներ է ստացել՝ իր ծառայողական լիազորությունները, դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով Մանուկ Քեշիշյանի եւ վերջինիս մատնանշած անձի օգտին հովանավորչության համար:

Մանուկ Սարգսի Քեշիշյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա երկու դեպքով կաշառք է տվել պաշտոնատար անձ հանդիսացող՝ ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդականին՝ վերջինիս կողմից ծառայողական լիազորությունները, դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով իր եւ իր մատնանշած անձի օգտին գործողություն կատարելու եւ հովանավորչության համար, ինչպես նաեւ որպես կաշառք գումարներ է տվել «Աշտարակ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենին՝ վերջինիս կողմից ծառայողական լիազորությունները, դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով իր /Մանուկ Քեշիշյանի/ եւ վերջինիս մատնանշած անձի օգտին հովանավորչության համար:

Արարատ Խաչատուրի Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա օժանդակել է «Աշտարակ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենին՝ վերջինիս կողմից ծառայողական լիազորությունները, դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով Մանուկ Քեշիշյանի օգտին հովանավորչության համար կաշառք ստանալուն:

Հարություն Ժորայի Գեւորգյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պաշտոնատար անձ, հաստատապես տեղեկանալով ինչպես ավարտված, այնպես էլ շարունակվող միջին ծանրության եւ ծանր հանցագործությունների կատարման մասին, անձնական շահագրգռվածությունից ելնելով՝ չի կատարել իր ծառայողական պարտականությունները, որն էական վնաս է պատճառել պետության օրինական շահերին, ինչպես նաեւ շարունակվել է հանցանքի կատարումը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ նոյեմբերի 18-19-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 93 դեպք:

Մասնավորապես, բացահայտվել է տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝ 25,

Ֆիզիկական ներգործության՝ 8, խարդախության՝ 7, թմրանյութի հայտնաբերման՝ 6, անձնական ունեցվածքի գողության՝ 5, թմրանյութի իրացման ու սառը զենքի հայտնաբերման՝ 4-ական, մարմնական վնասվածք պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու եւ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու՝ 3-ական, հոգեկան ներգործության, դրամանենգության, զենք-զինամթերքի առգրավման ու անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալու՝ 2-ական, պետական ունեցվածքի գողության, բնակարանային գողության, վստահված գույքի հափշտակման, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության, խուլիգանության, բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու, ծառերը, թփերը ապօրինի հատելու, ձերբակալվածների պահման վայրից, քննչական մեկուսարանից, դատարանից փախուստի, ինքնիրավչության, փաստաթղթի կեղծիքի, հետամտելու եւ հողը փչացնելու՝ 1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության 5 դեպք:

Հայտնաբերվել է 7 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 1-ը:

Հայտնաբերվել է 1 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 1 դեպք:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 16 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍԴ ԴԱՏԱՎՈՐ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՍԱՆԻԿԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ Նորայր Ժորայի Փանոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, արդարադատության նախարարի թիվ 22-Ա հրամանով, 2011 թ. հունիսի 13-ից մինչեւ 2014թ. մայիսի 6-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետի պաշտոնը եւ օժտված լինելով կազմակերպական-տնօրինչական, կարգադրիչ լիազորություններով՝ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով՝ նույն նախարարությանն մի խումբ պաշտոնատար անձանց հետ հանցակցությամբ, խոչընդոտել է նոտարների կողմից իրենց գործունեության վայրի՝ Երեւան քաղաքի Բաղրամյան պողոտայի 1-ին փակուղու 14-րդ շենքի 162-րդ հասցեում գտնվող տարածքի նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքն իրացնելու գործընթացին, որով էական վնաս է պատճառվել ՀՀ արդարադատության նախարարությանը, նոտարների համար գույքային վնասի տեսքով ծանր հետեւանքներ են եղել:

Բացի այդ, Նորայր Փանոսյանը, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով՝ նույն նախարարության մի խումբ պաշտոնատար անձանց հետ համակցությամբ հարկադրել է ՀՀ նոտարական պալատի նախագահին՝ պալատի համար ակնհայտ ոչ ձեռնտու պայմաններով վարձակալել արդարադատության նախկին նախարար Հրայր Թովմասյանին փաստացի պատկանող, Երեւան քաղաքի Ալեք Մանուկյան 8/1 շենքի 1-ին հարկում գտնվող անշարժ գույքը, որով էական վնաս է պատճառվել ՀՀ արդարադատության նախարարության եւ ՀՀ նոտարական պալատի օրինական շահերին, ինչպես նաեւ անզգուշությամբ առաջացրել է նոտարական պալատի համար գույքային վնասի տեսքով ծանր հետեւանքներ:

Գործը ուղարկվել է հակակոռուպցիոն դատարան, եւ այն մակագրվել է դատավոր Վահե Դոլմազյանին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀՈՎԻԿ ԱՂԱԶԱՐՅԱՆԸ ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ Է

Դատախազության «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները հայտնում են, որ ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանին երեկ՝ առավոտյան, կանչել են Հակակոռուպցիոն կոմիտե եւ նա նախաքննական մարմնում առերեսվել է կաշառքի գործով:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նրա դեմ ցուցմունք տված անձիք՝ Աշոտիկ Կամավոսյանը եւ Սլավիկ Պողոսյանը առերեսման ժամանակ պնդել են, որ Աղազարյանը կաշառք է ուզել իրենցից՝ գործընթաց կազմակերպելու համար:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «Իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանին կաշառք տալու գործով ՀՀ քաղաքացի Աշոտը մեղադրյալի աթոռին է հայտնվել, իսկ պատգամավորը անպատիժ է մինչ օրս:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի դեմ հակակոռուպցիոն կոմիտեում ցուցմունք են տվել, համաձայն որի՝ նա 300 հազար ԱՄՆ դոլար կաշառք է ուզել, որ Հայաստանից, սահմանված ընթացակարգերի խախտմամբ, առանց խոչընդոտների, մանր եղջերավոր անասուններ արտահանեն Արաբական Միացյալ Էմիրություններ:

«Ժողովուրդ» օրաթերթը իր իրազեկ աղբյուրներից տեղեկացավ, որ ՔՊ պատգամավորի դեմ ցուցմունք տված անձին՝ Աշոտին, հակակոռուպցիոն կոմիտեն մեղադրանք է առաջադրել ՔՊ պատգամավոր Հովիկ Աղազարյանին կաշառք փոխանցելու շուրջ պայմանավորվածություն ձեռք բերելու համար, նրա նկատմամբ ընտրված է խափանման միջոց՝ երկրից չբացակայելու արգելքը. սակայն պատգամավոր Աղազարյանին մեղադրանք առաջադրված չէ:

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Պարզվել են 23-ամյա երիտասարդի կողմից մեկ այլ անձի ավտոմեքենան հափշտակելու եւ ոստիկանության ծառայողի օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու դեպքերի մի շարք հանգամանքներ:

Նախաքննության ընթացքում կատարվել են դեպքերի՝ վթարի եւ հափշտակության վայրերի զննություններ: Հարցաքննվել են մի շարք անձինք, նշանակվել են դատաապրանքագիտական, դատաբժշկական եւ դատահոգեբուժական փորձաքննություններ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա 23-ամյա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով եւ 452-րդ հոդվածի 2-րդ մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 19-ից 20-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 153 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՎԱՐՏԻՆ

Նոյեմբերի 1-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Իջեւանի բաժնում տեղեկություն է ստացվել, որ Աչաջուր բնակավայրի Հ. Թամրազյանի անվան դպրոցի աշխատակիցը դպրոցում ծեծի է ենթարկել 9/Բ դասարանում սովորող 14-ամյա աշակերտին, որի հետեւանքով երեխայի մարմնի վրա առաջացել են կապտուկներ: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, նույն օրը երեխան հրավիրվել է բաժին, ով կատարվածի վերաբերյալ մայրիկի եւ մանկավարժի ներկայությամբ հայտնել է: Նա պատմել է, որ նոյեմբերի 1-ին՝ ժամը 12:00-ին, Աչաջուր բնակավայրի Հ.Թամրազյանի անվան դպրոցի 9/Բ դասարանում դասաժամի ընթացքում իր պայուսակում էլ. ծխախոտի փոխարինիչ հայտնաբերելուց հետո նույն դպրոցի ուսուցիչ, Տավուշի մարզի բնակիչ 70-ամյա Արմենակ Ա.-ն մի քանի անգամ ձեռքով հարվածել է իր դեմքին եւ մարմնի տարբեր հատվածներին, որից հետո դուրս է բերել միջանցք, կրկին հարվածներ հասցրել, ապա տարել է դպրոցի տնօրեն, Տավուշի մարզի բնակիչ 42-ամյա Ստելլա Փ.-ի աշխատասենյակ եւ 2 անգամ հարվածել մեջքին՝ պատճառելով ֆիզիկական ցավ: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ Արմենակ Ա.-ն, ով դպրոցի դաստիարակչական գծով փոխտնօրենն է, ձերբակալվել է, հաղորդման եւ կից փաստաթղթերի հետ ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչություն: Նոյեմբերի 11-ին տեղեկատվական հարցում ենք ուղարկել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին՝ նրանից հարցնելով. «նոյեմբերի 1-ին արտակարգ դեպք է տեղի է ունեցել Աչաջրի միջնակարգ դպրոցում: Դեպքից անցել է 10 օր, Տավուշի մարզպետարանը, որպես դպրոցի վերադաս պետական կառույց, կատարվածի վերաբերյալ քննություն կատարե՞լ է, եթե այո, ի՞նչ եք պարզել, ովքե՞ր են մեղավոր կատարվածի համար, 9-րդ դասարանցուն բազմիցս հարվածած, կապտուկներ առաջացրած, Աչաջրի դպրոցի դաստիարակչական գծով փոխտնօրեն Արմենակ Ասիլբեկյանը եւ այդ դպրոցի տնօրեն Ստելլա Փիրումյանը, ում աշխատասենյակում եւ ում ներկայությամբ փոխտնօրենը հարվածել է 9-րդ դասարանցուն մարզպետարանի կողմից պատասխանատվության ենթարկվե՞լ են»: Մարզպետարանից հարցմանը պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզի «Աչաջուր գյուղի Հ. Թամրազյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում տեղի ունեցած դեպքը առաջին օրվանից գտնվում է իրավապահ մարմնի տիրույթում: Այս պահին դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, որի ավարտից հետո Ձեզ կպատասխանենք»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՏՈՒՀԱՄ՝ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՀԱՋԱՆԳ Է ԵՂԵԼ ԱՊՕՐԻՆԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը հերթական ահազանգն է ստացել ապօրինի շինության մասին, որը դարձել է պատուհաս բնակիչների համար:



Երեւանի Կենտրոն վարչական շրջանի Նալբանդյան փողոցի 7/1 հասցեում գտնվող շենքի տանիքում, ըստ մեզ դիմած քաղաքացիների, իրականացվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ:

Փաստաբան Կարեն Քալանթարյանը, ով զբաղվում է այս խնդրով, «Ժողովուրդ» օրաթերթին ասաց, որ մոտ 2-3 տարի է, ինչ տուժածները չեն կարողանում բարձրանալ իրենց տանիք, քանի որ այն ապօրինաբար փակ է եղել՝ կողպված:

«Ինձ դիմել է ԱՄՆ քաղաքացի, ով ազգությամբ հայ է, ասում է, որ տեւական ժամանակ է՝ մոտ 2-3 տարի, չեն կարողանում բարձրանալ իրենց տանիք, քանի որ ապօրինաբար փակ է: Իրենք ապրում են հենց շենքի վերջին հարկում: Սակայն վերջին ժամանակահատվածում իրենց տան կախովի ֆրանսիական առաստաղներից ինչ-որ հոտ են զգացել, քանդել են այդ կախովի առաստաղները եւ տեսել, որ ամբողջ առաստաղը ջրի մեջ կորած է: Դիմել են մի շարք կազմակերպությունների՝ քաղաքապետարանի քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնին եւ այլ տեղեր, սակայն մնում են անպատասխան. ստիպված վերջում գրում են նամակ վարչապետի աշխատակազմին»,- ArmLur.am-ին պատմեց փաստաբանը:

Քալանթարյանի խոսքով՝ ՀՀ վարչապետի աշխատակազմին դիմելուց հետո աշխատակազմը քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարություն է տվել, որպեսզի պարզեն ամբողջ եղելությունը:

«Վարչապետի աշխատակազմը հանձնարարություն է տալիս, որպեսզի պարզեն, թե ինչ է տեղի ունենում: Քաղաքաշինության համապատասխան ստորաբաժանման կողմից գալիս է մի գրություն, որ կա ինքնակամ կառույց այդ շենքի տանիքի վրա, որը քաղաքացիների տան վրա է ուղիղ, եւ որը մի շարք խոչընդոտներ, վտանգներ է առաջացնում թե՛ շենքի, թե՛ շենքի բնակիչների համար: Այդ նամակը հասցեագրվում է քաղաքապետին: Քաղաքապետարանն անգործություն դրսեւորելով ոչինչ չի անում, մակագրում է համայնքին: Այս խեղճ մարդկանց կանչում են ու մեծ սկանդալ է դառնում թե՝ ինչո՞ւ եք վերջին հարկում տուն գնել, մենք օրական 10 նման նամակ ենք ստանում եւ տասնյակներով նման դեպքերի առնչվում: Ռեալ անգործություն է,- ասաց փաստաբանը:

Նշենք, որ փաստաբան Քալանթարյանը նաեւ ասաց, որ տուժած բնակիչները օրական 5 դույլ ջուր են տանից հանում եւ անելանելի իրավիճակում են:

«Ոչ մի կառույց ոչ մի կերպ լուծում չի կարողանում տալ այն պարագայում, որ քաղաքաշինության պատասխանի մեջ հստակ գրված են շատ հանգամանքներ: Մենք դատական պրոցես կսկսենք, այդ ամենը կանենք, բայց այս գործընթացը երկար տարիներ կշարունակվի, իսկ այդ մարդիկ տվյալ պայմաններում պետք է ապրեն, փաստորեն»,- նշեց փաստաբանը:

Նշենք նաեւ, որ փաստաբանը «Ժողովուրդ» օրաթերթին է տրամադրել քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնից ստացած նամակը, որտեղ սեւով սպիտակի վրա գրված է, որ շենքի տանիքում իրականացվել է ինքնակապ երկաթ բետոնե եւ մետաղական կոնստրուկտիվ աշխատանքներ, ինչպես նաեւ հատակների սալիկապատում:

«Ժողովուրդ» օրաթերթը նաեւ փորձեց կապ հաստատել Երեւանի քաղաքապետարանի հետ՝ պարզելու՝ ի՞նչն է խնդիրը, ինչո՞ւ քաղաքացիների խնդրին լուծում չի տրվում, սակայն երկրորդ օրն է, ինչ մեր զանգերը մնում են անպատասխան:

Դիմել ենք նաեւ Կենտրոն վարչական շրջանի աշխատակազմին՝ պարզաբանելու համար՝ ինչու են թույլատրել ապօրինի շինարարություն իրականացնել, որտեղից մեզ պատասխանեցին, որ հարցը գտնվում է համատիրության տիրույթում եւ իրենք եւս պահանջել են պարզաբանում այդ հարցով: Պատասխան ստանալու դեպքում կարձագանքեն:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՌՍՄԽ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

Հայաստան կատարած այցի շրջանակում նոյեմբերի 19-ին Ռազմական սպորտի միջազգային խորհրդի (ՌՍՄԽ) ղեկավար կազմը՝ խորհրդի նախագահ, գնդապետ Ռոլիմ Նիլտոնի գլխավորությամբ, եւ Ըմբշամարտի զինվորականների աշխարհի առաջնության մասնակից պետությունների պատվիրակությունների ղեկավարներն այցելել են Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր, հարգանքի տուրք մատուցել զոհերի հիշատակին:

ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ՄԻ ՇԱՐՔ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ԲԱՐՁՐԱՁԱՅՆՎԵԼ

Հայաստանի հանրակրթական հաստատություններում անցկացվում են դասալսումներ: Աշխատանքներն իրականացվում է ՀՀ կրթության տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ «Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» ծրագրի շրջանակներում:

«Արմենպրես»-ի մամուլի սրահում հրավիրված ասուլիսում ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Արսեն Բաղդասարյանը նշեց, որ նախորդ տարիների համեմատ ավելի շատ դպրոցներ են ընդգրկվել դասալսումների ցուցակում:

2022 թվականին նախատեսված է եղել 20, 2023 թվականին 30, իսկ 2024 թվականին առանձնացվել է 40 դպրոց: Արսեն Բաղդասարյանի խոսքով՝ ներգրավվել են այն դպրոցները, որոնք առանձնանում են մեծ թվով աշակերտներով: Դասալսումներ անցկացվում են թե Երեւանի, թե մարզերի դպրոցներում:

«Ծրագրի հիմնական նպատակն է խորհրդատվությունների միջոցով աջակցել ուսուցիչներին, որ ուսումնական հաստատություններում տվյալ առարկայի դրվածքը, դասավանդման որակն ավելի բարձրանա: Ընտրված են Մաթեմատիկա եւ Հայոց լեզու առարկաները: Հաջորդ տարվա համար նախատեսվում է ավելացնել նաեւ բնագիտական առարկաները»,- ասաց Արսեն Բաղդասարյանը: Դասալսումների ընթացքում դիտարկվում է թե՛ ուսուցիչների աշխատանքը, թե՛ աշակերտների ներգրավվածությունը, թե միջավայրը, անհրաժեշտ օժանդակ միջոցների առկայությունը եւ այլն: Դասալսումների իրականացման համար տեսչական մարմինը մշակել է գործիքակազմ, որը ներառում է դասալսման ձեւաթուղթ, գնահատման ուղեցույց, եզրակացության ձեւաթուղթ:

«Դասալսումների ընթացքում մասնագետները վերհանում են բոլոր խնդիրները, քննարկում դրանք ուսուցիչների հետ: Բարձրաձայնվում են տարաբնույթ խնդիրներ՝ դասը վարելու մեթոդական մոտեցումներ, աշակերտների մասնակցայնություն, առարկայական մասնագիտական հարցերի վերհանում: Այն ուսուցչի մոտ, որտեղ դասալսում է իրականացվում, մեր խնդիրն է աջակցել, ուղղորդել, թե նրա մասնագիտական որ հմտությունները, կարողությունները լավարկելու անհրաժեշտություն կա, ինչն էլ դրական իմաստով կարող է ազդել կրթության որակի վրա»,-ասաց Արսեն Բաղդասարյանը:

Նա նշեց, որ կան խնդիրներ, որոնք երկարաժամկետ լուծումներ են պահանջում, կան խնդիրներ՝ կարճաժամկետ: Դրանք բոլորը խմբավորվում են եւ ներկայացվում են շահագրգիռ բոլոր կողմերին:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵՄ-Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանն ընդունել է Բելգիայի Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Էրիկ դե Մույնքին:

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են ՀՀ մակրոտնտեսական իրավիճակին, կարեւորել երկկողմ տնտեսական հարաբերությունների խորացումը: Մտքեր են փոխանակվել նաեւ Եվրոպական Միության հետ համագործակցության օրակարգի ընդլայնման հեռանկարների շուրջ:

Կողմերը պատրաստակամություն են հայտնել շարունակել համատեղ ջանքերը ներդնել երկկողմ ձեւաչափում, այդ թվում՝ երկու երկրների ֆինանսների նախարարությունների միջեւ փոխգործակցության հետագա ամրապնդման, ընդլայնման ու ակտիվացման ուղղությամբ:

«ԱՎՏՈՎԱԶ»-Ը ԿԱՐՈՂ Է ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԳՆԵՐԸ

Ռուսական ավտոարտադրող «ԱվտոՎԱԶ»-ի արտադրանքի գները կարող են աճել հաջորդ տարի: Դրան նպաստում են բարձր տոկոսադրույքը եւ դոլարի փոխարժեքը: Այս մասին լրագրողներին ասել է ընկերության նախագահ Մաքսիմ Սոկոլովը:

Ըստ «ԱվտոՎԱԶ»-ի գնահատականների՝ այս տարի մարդատար ավտոմեքենաների թիվը ներքին շուկայում կհասնի 1,7 միլիոն միավորի, իսկ հաջորդ տարի՝ 1,3-1,4 միլիոնի:

Չնայած հոռետեսական կանխատեսումներին՝ ընկերությունը մտադիր չէ կրճատել իր ծրագրերը. 2025 թվականին արտադրողը ցանկանում է թողարկել 500 հազար ավտոմեքենա, գործարկել նոր նախագծեր եւ դուրս գալ իրանական շուկա:

ԵՐԲ ԿՎԱՌՎԵՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԱԾԱՌԻ ԼՈՒՅՍԵՐԸ

Եթե արտառոց բան չլինի, 100 %-ով դեկտեմբերի 8-ին է լինելու մայր տոնածառի լույսերի վառման արարողությունը: Այս մասին երեկ՝ ասուլիսի ժամանակ, ասել է Երեւանի փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանը:

Հիշեցնենք, որ Երեւան քաղաքի ամանորյա զարդարանքի համար այս տարի կծախսվի 549 մլն դրամ: Գրիգորյանը տեղեկացրեց, որ ամանորյա միջոցառումները, ձեւավորման աշխատանքները ձեռք են բերվել երկփուլ մրցույթի ընթացակարգով, իսկ աշխատանքները բաժանվել են 5 լոտի:

Գրիգորյանը նշեց, որ առաջին լոտի համար նախատեսվել էր 50 մլն, սակայն կծախսվի 18-ը չկայանալու պատճառով, 2-րդ լոտինը կազմել է 60 մլն դրամ, 3-րդինը՝ 190 մլն, 4-րդինը՝ 90 մլն, 5-րդի համար՝ 210 մլն դրամ:

Գրիգորյանը չահամաձայնեց կարծիքների հետ, թե ավելորդ դրամ է ծախսվում ամանորյա զարդարանքի համար եւ գնալով՝ բյուջեն ավելանում է:

ՉԵՆ ՁԵՎԱԿԵՐՊԵԼ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

ՏՈՒԳԱՆՔԻ ՉԱՓ՝ 24.5 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ 2024 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում ավարտված հսկողական աշխատանքների արդյունքներով վարձու աշխատողի չձեւակերպման դեպքեր արձանագրվել են ընդհանուր առմամբ 41 հարկ վճարողի մոտ, իսկ տուգանքի չափը կազմել է 24.5 մլն դրամ:

Երեք եւ ավելի վարձու աշխատողների չձեւակերպման 12 դեպքով 12 հարկ վճարող տուգանվել է 15 մլն դրամով: Մասնավորապես, դեպքերն արձանագրվել են հետեւյալ ոլորտներում.

ավտոտեխսպասարկման եւ (կամ) ավտոլվացման ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 5 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 1.250 մլն դրամ տուգանք,

կահույքի արտադրության ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 4 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 1 մլն դրամ տուգանք,

հանրային սննդի ոլորտում (հանդիսությունների սրահ ունեցող) 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 4 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 1 մլն դրամ տուգանք,

հանրային սննդի ոլորտում (հանդիսությունների սրահ չունեցող) 4 հարկ վճարողի մոտ 4 դեպքով բացահայտվել է 22 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 5.5 մլն դրամ տուգանք,

հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 3 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 750 հազար դրամ տուգանք,

շինանյութի առեւտրի ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 6 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 1.5 մլն դրամ տուգանք,

ոչ ալկոհոլային խմիչքների արտադրության ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 4 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 1 մլն դրամ տուգանք,

պահածոների արտադրության ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 7 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 1.750 մլն դրամ տուգանք,

տրանսպորտային (փոխադրման) գործունեության ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 5 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 1.250 մլն դրամ տուգանք:

Միաժամանակ, կոմիտեն տեղեկացնում է, որ չձեւակերպված վարձու աշխատողների մասով խախտում թույլ տված հարկ վճարողների ցանկերում հաշվի չեն առնվել ստուգման ակտերի վարչական կամ դատական կարգով հնարավոր վիճարկման արդյունքները:

Երեք եւ ավելի չձեւակերպված վարձու աշխատողների մասով խախտում թույլ տված 12 հարկ վճարողների անվանական ցանկը՝ ըստ գործունեության ոլորտների:

Չձեւակերպված վարձու աշխատողների մասով խախտում թույլ տված 41 հարկ վճարողների ցանկը:

ՀՀ ՊԵԿ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

«Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ հայաստանյան մասնաճյուղը Ազատան համայնքում ունի հանրային վաճառքի համար նախատեսված, 2018 թվականի արտադրության շարժական քարջարդիչ սարքավորում (YD150): Գինը՝ պայմանագրային:

⇨

Հեռ.՝ +37499369094 Գեղամ
Էլ. հասցե՝ sinohydro_am_lg@163.com

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Ես՝ Լիլիթ Ավշարյանս, 2023 թվականի սեպտեմբերին կորցրել եմ Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի թիվ AA № 009590 դիպլոմս: Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 97 204 747 հեռախոսահամարին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (3)

Ես՝ Լիլիթ Ավշարյանս, 2023 թվականի սեպտեմբերին կորցրել եմ Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի թիվ AB № 144814 դիպլոմս: Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 97 204 747 հեռախոսահամարին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (4)

Ես՝ Լիլիթ Ավշարյանս, 2023 թվականի սեպտեմբերին կորցրել եմ Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի թիվ AD № 084469 դիպլոմս: Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 97 204 747 հեռախոսահամարին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (5)

Հարգելի հայրենակիցներ,

Հիշեցնում ենք, որ Հանրապետության մարզերում մինչեւ 2021թ-ը կառուցված ինքնակամ շինություններն օրինականացնելու համար անհրաժեշտ է պարտադիր կերպով դրանք հաշվառել Կադաստրի կոմիտեում՝ կառավարության կողմից սահմանված հաշվառման կարգի համաձայն:

2024 թվականի հունվարի 1-ից ավարտվել է ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ ԸՆԴԳՐԿՈՂ խոշորացված համայնքներում կառուցված ինքնակամ կառույցների հաշվառումը:

ԲԱՑԱՌԱՊԵՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ ընդգրկող համայնքներում կառուցված ինքնակամ կառույցների հաշվառումը կշարունակվի մինչեւ 2025 թվականի հունվարի 1-ը:

ՀՀ կադաստրի կոմիտե

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (6)

Ս.թ. նոյեմբերի 14-ին Երեւանի քաղաքապետի կողմից տրվել է Կենտրոն վարչական շրջան, Վարդանանց փողոց հ.18 շենք, հհ. 3, 12 տարածքներ եւ հհ. 4, 13 շինություններ հասցեներում հասարակական տարածքների վերակառուցման՝ մուտքերի իրականացման եւ վերահատակագծման թիվ 01/18-02-1983-24 շինարարության թույլտվությունը, որի հետ ամբողջական կարելի է ծանոթանալ labeerint.am/այլ/ համացանցային կայքէջի միջոցով:

Սույն հայտարարությունը հանդիսանում է «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրականացված հրապարակման եղանակով իրազեկում:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅ ՄԵԾԵՐ

ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻ ՈՒ ՆՐԱ ԱՐՎԵՍՏԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Յուրաքանչյուր երկիր հայտնի է իր պատմական, մշակութային արժեքներով, որոնց թվում են նաեւ ճարտարապետական շինությունները, տեսքերը, քանդակագործությունը:

Օրինակ՝ Փարիզը հայտնի է իր էյֆելյան աշտարակով, Իտալիան՝ Պիզայի աշտարակով, Սանկտ Պետերբուրգը՝ իր «Էրմիտաժով» եւ այլն:

Հայաստանը շատ հուշարձաններով, քանդակագործության եզակի նմուշներով, հին եւ նոր փողոցներով եւ ընդհանրապես հյուրընկալ մթնոլորտով է հայտնի, սակայն հարկ է առանձնացնել ամենահայտնի կոթողներից մեկը՝ Սասունցի Դավթի արձանը:

Քանդակի հեղինակը նշանավոր, հայ մեծանուն նկարիչ-քանդակագործ Երվանդ Քոչարն է:

Շուրջ երեք օր է, ինչ Երվանդ Քոչարի անվան թանգարանի շուրջ սկանդալային պատմություններ են պտտվում: Բանն այն է, որ նոյեմբերի 19-ին՝ վաղ առավոտյան, տարածվեց տեղեկություն, ըստ որի՝ Երվանդ Քոչարի անվան թանգարանից անհետացել են նկարչի 7 ստեղծագործությունները՝ մոտ 500.000 դոլար արժողության: Այս ամենն այնպիսի աժիոտաժ առաջացրեց, որ Երվանդ Քոչարի թանգարանը հերքեց տեղեկատվությունը՝ հայտարարելով, որ տարածվող լուրերը ապատեղեկատվություն են եւ թանգարանն իր բնականոն աշխատանքն է կատարում:

Չնայած այս ամենին՝ երեկ էլ տեղի է ունեցել մամուլի ասուլիս, որի ժամանակ Երվանդ Քոչարի որդին՝ Ռուբեն Քոչարը ասել է, որ կասկածներ ունի Քոչարի թանգարանում ցուցադրված գործերի օրիգինալ լինելու վերաբերյալ եւ պետությունից խնդրել է փորձաքննություն:

Այսպիսով՝ քանդակագործ-նկարչի շուրջ առաջացած հետաքրքրությունը ավելի է մեծացել հատկապես այս երկու օրերի ընթացքում:

«Ժողովուրդ» օրաթերթը այս համատեքստում ներկայացնում է Քոչարի կյանքից հետաքրքիր դեպքեր, պատմություններ:

Երվանդ Քոչարն ու մեծն վարդապետ Կոմիտասը մտերիմներ են եղել: Նրանց միջեւ կապվածությունն առանձնանում էր ոչ միայն համատեղ հետաքրքրություններով, այլեւ իրար հանդեպ ունեցած ունեցած հարգանքի, եւ միմյանց ճանաչմանը նպաստելու հետ:

Երվանդ Քոչարը շատ երիտասարդ տարիքում ճանաչեց Կոմիտասին, երբ նա դեռ գտնվում էր արվեստի եւ մշակույթի ուսումնական ճանապարհի սկզբում: Քոչարի համար Կոմիտասը դարձել էր այն մարդը, ով չնայած ծայրահեղ դժվարություններին ու ճնշումներին՝ կարողանում էր պահել հայկական մշակույթի ու երաժշտության արժանապատվությունը՝ միեւնույն ժամանակ բացահայտելով հայ ժողովրդի հոգին:

Կոմիտասի երաժշտությունը եւ ժողովրդական ստեղծագործությունները, մշակումները, որոնք հաճախ արտահայտում էին հայ ժողովրդի ցավը, սպասումները եւ արծարծումները, մեծապես ազդել են Քոչարի արվեստի վրա: Քոչարը, լինելով նկարչական արվեստի եւ քանդակագործության մեջ ճանաչված անձ, միշտ ընդգծել է, որ Կոմիտասի արվեստը շատ մոտ է եղել իր պատկերացումներին՝ ուներ նույն ազգային խորությունը, նույն հոգեւոր ձգտումը:

Քոչարը հաճախ խոսում էր այն մասին, թե ինչպես Կոմիտասի երաժշտությունը կամ հարցը դարձավ այն տարրը, որ շոշափեց նրա արվեստի խորքային ու ազգային բնույթը: Կոմիտասի երաժշտական ստեղծագործությունները ուղեկցում էին Քոչարին ինչպես ստեղծագործական ուղու, այնպես էլ իր համար՝ որպես արվեստագետի՝ հայկական ինքնագիտակցության ձեւավորման գործընթացում: Քոչարը, իսկապես, միշտ երախտապարտ էր Կոմիտասի ազդեցությանը, որը նրա մոտեցումներին ու արվեստին մի մեծ հիմնարար կողմ տվեց՝ հայրենասիրությունը, ազգային մշակույթի պահպանման եւ գեղեցկության սկզբունքները:

Ասում են, որ Քոչարը շատ լավ պատկերացնում էր Կոմիտասի ստեղծագործական պայքարը, որի մեջ նա որպես երաժիշտ ու ազգային մշակույթի պահապան հանդես էր գալիս: Բացի այդ, Քոչարը հավանաբար հավատում էր, որ երաժշտության եւ նկարչության միջեւ կարող է լինել մեկ խորքային կապ՝ հայկական հոգեւոր արժեքների արտահայտման ու վերականգնման համար:

Նրանց ընկերությունը նաեւ որոշակի դրսեւորումներ ունեցավ մշակութային միջոցառումներում ու համերգներում, երբ Քոչարը հանդես էր գալիս որպես քանդակագործական, նկարչական արվեստի ներկայացուցիչ, իսկ Կոմիտասը՝ որպես երաժշտության հայ ժողովրդի ոգու արտահայտիչ:

Քոչարն իր քանդակագործական եւ գեղանկարչական աշխատանքներում շատ հաճախ հիշատակել է Կոմիտասին՝ օգտագործելով նրա երաժշտության հիման վրա ձեւավորված պատկերներ եւ խորհրդանշաններ: Օրինակ՝ Քոչարի ստեղծագործություններից մեկում՝ «Կոմիտաս» քանդակում, նկարագրված է Կոմիտասի կերպարը որպես ազգային մշակույթի մեծագույն պահապան: Քոչարն այս քանդակում ներկայացրել է Կոմիտասին այնպիսին, ինչպիսին նա եղել է՝ հոգեպես պայծառ եւ անձնական ազատության մեջ՝ ժողովրդի ցավը եւ պայքարը ամփոփած:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՍՈՒՐԲԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԱՎԱՃԱՌ՝ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

ԻՆՉ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում մեկնարկել է Շոյիտելբերգի Սուրբ ծննդյան տոնավաճառը, որին առանձին տաղավարով մասնակցում է նաեւ Հայաստանի Հանրապետությունը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը ծրագիրն իրականացնում է Երեւանի քաղաքապետարան հետ՝ ՀՀ ԱԳՆ աջակցությամբ, Մշակույթի զարգացման հիմնադրամի եւ «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ-ի հետ համագործակցությամբ:

Ծրագիրը նպատակ ունի խթանել Հայաստանի մշակութային ժառանգության միջազգային հանրահռչակումն եւ երկրի ճանաչելիության բարձրացումը:

Հայաստանի տաղավարում ներկայացված են 40 վարպետների ձեռագործ աշխատանքներ. մասնավորապես՝ ցուցադրվում են կարպետագործործության, խեցեգործության, տիկնիկագործության տարբեր նմուշներ եւ հուշանվերներ, որոնք ամբողջացնում են հայկական ձեռագործ արվեստի լավագույն ավանդույթները: Սուրբ ծննդյան տոնավաճառի շրջանակում Հայաստանի տաղավարում այցելուների համար կիրականացվեն նաեւ վարպետաց դասեր՝ նվիրված հայկական ժողովրդական արհեստագործության մեջ կիրառվող տեխնիկային եւ առանձնահատկություններին:

Վիեննայում Շպիտելբերգի Սուրբ ծննդյան տոնավաճառը կշարունակվի մինչեւ դեկտեմբերի 23-ը:

Շպիտելբերգի տոնավաճառը Վիեննայի ամենահայտնի Սուրբ ծննդյան տոնավաճառներից է, որն ամեն տարի գրավում է հազարավոր այցելուների ուշադրությունը: Այն իրականացվում է 1970-ական թվականներից սկսած՝ Վիեննայի Շպիտելբերգ պատմական թաղամասի Շպիտելբերգգասե, Գուտենբերգգասե եւ Շրանկգասե հետիոտնային փողոցներում:

Նշենք նաեւ, որ 2023 թ. Հայաստանն առանձին տաղավարով մասնակցել է Ստրասբուրգի Սուրբ ծննդյան տոնավաճառին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՍՈՒՊԵՐԱՄԱՐՏԻ ՊԱՏԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԵՆ ՀԱՆԴԵՍ ԵԿԵԼ

Հայաստանի սուսերամարտի պատանեկան հավաքականի անդամները հաջող են հանդես եկել Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում անցկացված միջազգային մրցաշարում:

Հայաստանի ներկայացուցիչներից միջազգային մրցաշարի հաղթողի կոչմանն ու ոսկե մեդալին արժանացել է ճկասուսերակիր Գագիկ Մորիկյանը: Նույն զենքաձեւում Նարեկ Հովհաննիսյանը զբաղեցրել է երկրորդ տեղն ու պարգեւատրվել արծաթե մեդալով, իսկ Խաչատուր Սեթոյանն ու Նարեկ Սահակյանը դարձել են բրոնզե մեդալակիրներ:

Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Գագիկ Հովհաննիսյանի խոսքով՝ հայ մարզիկների ելույթները գոհացնող են: Հայաստանի թիմում 8 մարզիկ է ընդգրկված եղել: Միջազգային մրցաշարին Հայաստանի, Վրաստանի, Ղազախստանի, Կատարի եւ Թուրքիայի շուրջ 30 մարզիկներ են մասնակցել:

Այս օրերին ընթանում է նաեւ Հայաստանի սուսերամարտի պատանիների առաջնությունը: Հայաստանի առաջնության արդյունքներով կձեւավորվեն տղաների եւ աղջիկների հավաքականները, որոնք դեկտեմբերի 11-14-ը Քութայիսի քաղաքում կմասնակցեն երիտասարդների եւ պատանիների առաջնությանը՝ խոցասուսեր, ճկասուսեր եւ թրասուսեր զենքաձեւերում:

UFC–ԻՆ ԹԱՐՄԱՑՐԵԼ Է ՎԱՐԿԱՆԻՇԸ

UFC-ին հրապարակել է լավագույն մարտիկների վարկանիշային աղյուսակն առանց քաշային կարգերի բաժանման:

Առաջին տեղը պահպանել է թեթեւ քաշային կարգի չեմպիոն Իսլամ Մախաչեւը:

Երկրորդ տեղ է բարձրացել ծանրքաշային Ջոն Ջոնսը:

Ամերիկացին նոյեմբերի 17-ին UFC 309-ում հաղթել է Ստիպե Միոչիչին:

UFC-ի վարկածով լավագույն մարտիկների տասնյակը հետեւյալն է.

1. Իսլամ Մախաչեւ (Ռուսաստան)
2. Ջոն Ջոնս (ԱՄՆ)
3. Ալեքս Պերեյրա (Բրազիլիա)
4. Իլյա Տոպուրիա (Վրաստան)
5. Բելալ Մուհամադ (ԱՄՆ)
6. Դրիկուս դյու Պլեսի (ՀԱՀ)
7. Մերաբ Դվալիշվիլի (Վրաստան)
8. Թոմ Ասպինալ (Մեծ Բրիտանիա)
9. Լեոն Էդվարդս (Մեծ Բրիտանիա)
10. Ալեքսանդր Վոլկանովսկի (Ավստրալիա)

Հիշեցնենք, որ Արման Ծառուկյանն առաջին տեղում է թեթեւ քաշային կարգում:

● *Նոյեմբերի 30-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Փարիզյան դատավճիռ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է մերժվում ապոստիլով վավերացումը:

Լիանա Խաչատրյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պաշտոնական փաստաթուղթն ապոստիլով վավերացնելու դիմումը մերժվում է, եթե՝

1) փաստաթուղթը պատրաստել կամ հաստատել կամ կնքել է դրա լիազորությունը չունեցող անձը կամ մարմինը,

2) փաստաթուղթը չի համապատասխանում տվյալ փաստաթղթի համար սահմանված ձեւաչափին,

3) փաստաթուղթն ապոստիլով վավերացման ենթակա չէ,

4) փաստաթուղթն ապոստիլով վավերացնելու մասին դիմումը ներկայացվել է սույն օրենքի եւ փաստաթուղթն ապոստիլով վավերացնելու գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգի խախտմամբ,

5) անընթեռնելի են փաստաթուղթն ստորագրող անձի պաշտոնեական դիրքի մասին տվյալները, վերջինիս ստորագրությունը, փաստաթուղթը հաստատող կնիքը կամ դրոշմակնիքը,

6) փաստաթուղթը վնասված է, պահպանված չէ փաստաթղթի ամբողջականությունը, փաստաթղթի վրա առկա են անթույլատրելի գրառումներ,

7) չեն ներկայացվել փաստաթուղթն ապոստիլով վավերացնելու համար օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը, սույն օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված պետական տուրքի վճարման հավաստումը,

8) փաստաթուղթը ներկայացվելու է Կոնվենցիային չանդամակցող երկիր,

9) փաստաթուղթն ակնհայտ կեղծ է:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փաստաթղթի վրա ապոստիլը դրվում է դիմումը նախարարություն մուտք լինելու օրվանից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Առանձին փաստաթղթերի իսկությունը ճշտելու համար գործակալության պետի կողմից ապոստիլ դնելու ժամկետը կարող է երկարաձգվել օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ու կարգով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ ժամկետում պետք է նշանակվի կենսաթոշակը:

Հայկուհի Մելքոնյան (63 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը դիմումն ընդունելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները, կայացնում է հետեւյալ որոշումներից մեկը՝

- նշանակել կենսաթոշակ,
- նշանակել կենսաթոշակ եւ տեղեկացնել կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին,
- մերժել կենսաթոշակ նշանակելը:

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում մեկնարկել է Շպիտելբերգի Սուրբ Ծննդյան տոնավաճառը, որին առանձին տաղավարով մասնակցում է նաեւ Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի տաղավարում ներկայացված են 40 վարպետների ձեռագործ աշխատանքներ. մասնավորապես՝ցուցադրվում են կարպետագործության, խեցեգործության, տիկնիկագործության տարբեր նմուշներ եւ հուշանվերներ, որոնք ամբողջացնում են հայկական ձեռագործ արվեստի լավագույն ավանդույթները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-2 - 6 + 4 + 8
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 4 + 9
Կոտայքի նախալեռներ	-1 + 3 +9 + 12
Գեղարքունիք	- 3 - 7 + 5 + 8
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 14
Արագածոտնի լեռներ	- 2 - 6 + 2 + 7
Արագածոտնի նախալեռներ	-2 + 2 + 8 + 13

Արարատ	-1 + 2 +13 + 15
Արմավիր	-2 + 2 +13 + 15
Վայոց ձորի լեռներ	-1 + 2 + 3 + 6
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
Սյունիքի հովիտներ	-1 + 5 + 8 + 12
Սյունիքի նախալեռներ	+1 + 5 +12 + 16
ԼՂՀ	0 + 4 +11 + 14
Երեւան	+ 6 + 8 + 11 + 13

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.11.2024**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*